

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՄԻ ՀԱՄԵՍ ԿԱՐԾԻՔ

Արիստակէս հպիսկոպոս (Մեղքակեան) Հայաստանիայց եկեղեցու պատկերայար-
դութիւնը. Մասն Ա. Պետրովորդ 1904 թ. հաջորդած պատճենահանութիւն է,
16 օктяբրյա 1903 թ. Գինն է 1 ռ. 50 կ.

Ընթերցողը երբ մեր յօդուածի ճակատը զարդարուած
տեսնի գեր. Տ. Արիստակէս Մըրբազան Արքեպիսկոպոսի նոր
երկասիրութեան անունով, անշուշտ վայրկենաբար այն կար-
ծիքը պիտի կազմէ թէ՝ մեր յօդուածը մատենախօսութիւն է,
կամ ինչպէս արդի «մասնագէտ» մատենախօսներն են ասում
«կրիտիկա» է: Ժամանակակից Հայոց «կրիտիկոսները», ինչպէս
և նոր «հեղինակները» քննադատելու և գրելու համար մի ընդ-
հանուր որոշ բանաձև ունին, կանոններ կամ կաղապար, որոնց
վրայ չափում ու ձեռում են քննադատական «արուեստը» կամ
գրելի երկը: Հարկաւ այդ կանոններն էլ կամ կաղապարը օտա-
րի արհեստանոցում շինուած ու փոխ արուած բաներ են:

Եւ որովհետև մենք այլոց գրական կանոններն ընդունելու
հէ շնորհքն և հէ յօժարութիւնն ունինք, ուստի և մեր յօդուա-
ծի գլխին «մատենախօսութիւն» դրոշմը դնելու համարձակու-
թիւնը չունեցանք, այլ «Մի համեստ կարծիք» վերնագիրը:

Անտարակոյս «պատկերայարգութեան» սրբազան հեղինա-
կը, ինչպէս և պաշտօնական կրիտիկոսները մի ուրախ հեգ-
նութեամբ հարցնելու են մեզ «Հապա ի՞նչ կանոններով կամ
ի՞նչ հայեցակէտերով պիտի յայտնէք ձեր կարծիքը ո՞րեւէ երկի-
կամ հէնց այս պատուտկան նմուշի վրայ»:

Այս բոպէիս դնելու ենք այստեղ մեր կարծեաց առաջ-
նորդող մաքերը: Ապա այդ կանոնով էլ կշափենք սրբազան
արքեպիսկոպոսի գիրըն ու գաղափարները, որպէս զի իմանայ-
իէ որոնք են չափից երկար, կամ շատ կարծ և կամ հաւասար:

Ամեն մարդ, որ ինքն իրան գրական մարդ է համարում,
երկու հիմնական բանով է առաջնորդւում, ներքին շարժառի-

թով և նրա հետ կապուած նպատակով, որ առաջնի արդիւնքը կամ ծնունդն է:

Ներքին, հոգեկան շարժառիթով է չափուում որ և է գրական երկի և հեղինակի արժէքը: Շարժառիթները բազմատեսակ են. հետեւարար բազմատեսակ են և նրանց նպատակները:

Մի գրագէտ անձ, որ ի բնէ կամ իւր ստացած գաստիացակութեան շնորհիւ նրբազգաց հոգի՝ ունի, զթու է և չի կարողանում անտարբերութեամբ նայել իւր շուրջը. կատարուող անիրաւութեանց, թշուառութեան, անպարտաճանաչութեանց վրայ, որոնք հետեւանք են ճշմարիտ կեանքի իմաստութիւնից (այլ ոչ միայն միայն գիտութիւնից) զուրկ լինելուն, անձնուիրաբար նետուում է թշուառութեան, արհաւիրքների բերանը, որոնք պատրաստ են շատ անզօրներ կլանել և մաքառումն է սկսում նրանց դէմ: Նրա հոգին շարժում է նրան, վարում է դէպի դեերի լէգէօնը պատերազմ տալու: Բայց նա ամեն տեղ անձամբ համանել չի կարող. ուստի առանձնանում է, զրիչ է վերցնում ու իրեն տանջող յոյզերն ու մտքերն ազատորէն հեղում է թղթի վրայ: Ուրիշներին բարիք անելու ներքին բուռն փափազը առանց կողմանակի, անձնական օգտի հակումների, գրելու շարժառիթն է, իսկ արդիւնքը կամ նպատակը զիրք եղաւ: Եթէ այս տեսակ գիրքը չհնացող, յաւիտենական դաղափարներ ունի իւր մէջ կամ կեանքի իմաստութիւնն է, որին համեմատ ապրել և անձնապէս գործել է հեղինակը, գիրքը դարերի սեփականութիւն է դառնում ու չի հանում: Նա դառնում է երջանկութեան ուղիցոյց, հաւատի դաւանագիր, իսկ հեղինակը՝ սուրբ, պաշտելի և հետեւելու վսեմ օրինակ:

Նոյն շարժառիթով և նպատակով գրուել կարող է և մի ուրիշ գիրք, որ միայն իւր ժամանակին է օգուտ, բարիք բերում: Այս կարճաժամանակեալ զիրքը, որ բարոյական շարժառիթից է բղխում (իսկ բարոյական շարժառիթ ենք ընդունում այլոց ծառայելու բուռն, անսանձ փափազը) և անկեղծ ոգենորութեամբ է արդիւնաւորւում, հօր ամբարտակ կարող է լինել այն շարեաց դէմ, որոնք կարճաժամանակեայ են: Զարիքները վերացան, մեռնում է և գիրքը բարի յիշատակ թողնելով իւր ետևից:

Այսպիսի շառժառիթով գրուած, սերձաւորին կամ մի վսեմագոյն գաղափարի ծառայող գիրքը, որ անմիջապէս մարդկանց սրտի հետ է խօսում, ինքն է իւր արժանեաց վկան, իւր անման հեղինակի պատկերը ցոլացնող մի ջինջ հայելի:

Այդ տեսակ երկը կարող է լինել Աստուածաշնչի նման

ստուար մի հատոր, կամ մի փոքրիկ տեսրակ կամ նոյն իսկ մի նուանաւոր դիցուք Դոգուխեանի «Ճիծեռութեանկի» չափ, կամ մի նամակ. այդ միենոյնն է: Գրքի արժանիքը նրա ծաւալով չի չափում:

Մարդ էլ կայ, որի աստուածատուր տեսանող մտքի մէջ տիեզերքի իրերն ու երևոյթները իրար հետ շղթայուած են անդրադառնում. մինչդեռ մտքով տկար բազմութիւնը աշխարհն իւր երևոյթների և պատճառների կապակցութեամբ չի ըմբռնում, այլ մոլորութեամբ մի երևոյթ ուրիշ պատճառի է վերագրում և ընդհակառակը. ու անզօր է դառնում քնութիւնից ցանկալի օգուտն ստանալ: Մտաւոր այս կուրութեան առաջյուղում է մտքով հօօր տեսանողի հոգին և շրջապատի մութը փարատելու համար նա առանձնանում ու իւր մտքերն՝ իրեւ հերքումն մոլորութեան կամ իրեւ մի վառած ուղեցոյց լապտերդէաի տիեզերքի գաղտնարանները, զրի է առնում: Մտաւոր լուսեղէն շարժառիթը, որ ճնշում էր խորհողի հոգին, նրան շարժեց արձանագրելու իւր պայծառատեսութիւնը և գրուածքը գիրք եղաւ:

Այս տեսակ գիրքն էլ տեսական կամ կարճատև կարող է լինել բայց միշտ օգտակար ու միշտ գոհութեան արժանի: Մրա արդէքն էլ ծաւալով չի չափուում, որովհետև մի փոքրիկ երկն երբեմն շատ առաւել լոյս է սփոռու իրերի և երևոյթների վրայ, քան մի ուրիշ անարժէք հասաւափոր հատոր:

Այս երկու տեսակ վսեմ շարժառիթից ծնող գրքերը իրենց նիւթը անխտիր կերպով վերցնել կարող են անցեալից կամ ներկայից, որոնց հիման վրայ նախատեսում են և ապագան, ամբողջ մարդկութեան կեանքից կամ մի ազգի կեանքից: Եւ նայելով իրենց մէջ ամփոփուած ճշմարտութեանց, մերթ ամբողջ աշխարհի, մերթ մի երկրի սեփականութիւնն են դառնում:

Երկուսի նպատակն էլ մի է. այն էլ երջանիկ դարձնել ապերջանիկ և անկատար մարդկութիւնը երկու տարբեր ճանապարհով, որ մի միջավայրից են սկիզբն առնում:

Այս երկու տեսակ երկը իրարից և զանազանուում են իրենց եղանակով կամ ըստ «կրիտիկոսների» մեթոդով: Առաջինը խօսում է սրտիդ հետ, իւր ճշմարտութիւնները չի ապացուցանում, այլ ներշնչում է և անմիջապէս համոզում: Երկրորդը ապացուցանում է, փաստեր է առաջ բերում և այնպէս է համոզում: Առաջնի արտայայտութեան միջոցը զգացմունքն է, օր. սէրը, հաւատը, անկեղծ ոգևորութիւնը:

Երկրորդինը՝ տղամաբանութիւնը։ Առաջինը կրթում, ազնուացնում է մարդու վարքն ու բարքը սովորեցնելով անձով ու գործով մերձաւորին ծառայել։ Երկրորդը մեծ մասով հնարաւորութիւն է տալիս նիւթ, հարստութիւն շահելու ազնիւ գործի, այլրց պէտքերին ծառայեցնելու։ Առաջինը կեանքի նպատակն է երկրորդը՝ միջոցը։ Վերջինն առանց առաջնի եսական է, անհատական և վասակար։ Նրա հետ մէկ տեղ՝ յոյժ կարևոր և գախտ։

Առաջին տեսակի ճշմարտութիւն քարոզողների առաջ մարդկանց սիրտը խոնարհում է։ Նրանցից գերազոյններին մարդկութիւնը սրբութեան սեղանն է հանում և աստուածացնելով պաշտում։ Երկրորդ տեսակի ճշմարտութեանց առաքեաններին յարգում և ճիծեց տիտղոսով մեծարում։

Այս տեսակ գրքերի մէջ արուեստականութիւն կամ ոճի բռնազրօսիկ զարդարանք չկայ։ Հեղինակի անձնաւորութեան և վարդապետութեան մէջ հակասութիւն չկայ։ Երկի մէջ նայում ես հեղինակի պայծառ պատկերն ես տեսնում։ Հեղինակի կեանքըն ես դիտում, նրանում երկի։ Վսեմութիւնն ես նկատում։ Անձն և երկն իրարից անբաժան, սերտ կապուած են։

Դրանց պարզ, անկեղծ ոճը, մտքերի հետևողական շարքերը տպաւորիչ են մեծի ու փոքրի համար, ուստի և կրթիչ աղդեցութիւն են գործում ընթերցողի սրտի և մտքի վրայ։

Այդ տպաւորութիւնը առաւել հրապուրիչ է լինում ճաշակի և զգայարանքների համար, երբ արտաքինն էլ համապատշաճ է գրքի ներքինին։ այսինքն գրուածքը կամ հրատարակութիւնը մաքուր է, նիւթերն ընտրովի և դիւրեկան։ Փալասների մէջ փաթաթուած մարգարիտը մարդու սրտից ափսոսանք է քաշում։ Կերպասի մէջ ծրարուած փայտի կտորն էլ ծիծաղ է շարժում։ Այսպէս է և արժանաւոր կամ անարժան գրքի ներքինի և արտաքինի յարաքերութիւնը։ Լաւ գիրքն արժէ, որ սիրուն հրատարակութեամբ լոյս տեսնի։

Երկրորդական ընտիր գրքերն էլ վերը յիշած երկու տեսակ գրքերի արժանաւորութիւնից մասն պիտի ունենան իրենց մէջ։ Նրանց համեմատական չափը իրենց արժանաւորութեան չափն է։

Աշխարհի անհուն, անծաւալ գրականութեան մէջ շատ սակաւ և քանակով շատ չնշն է ընտիր գրքերի թիւը։

Գրքերի մեծամասնութիւնը, որ գրեթէ լափում է հասարակ ընթերցողների բազմութիւնը, վասակար աղդեցութիւն են գործում կատարեալ յառաջադիմութեան վրայ։

Մէկը անձնական ատելութիւն ունի՝ իւր զայրոյթն արտայայտելու համար, գրիչ է վերցնում, գիրք գրում և ընթերցողին միայն ատելութիւն է բաժին թողնում: Մի ուրիշ անտաղանդը, որ հոչակ վայելելու անյագ ծարաւն է զգում, գրիչ է վերցնում որ հեղինակների շարքը մտնի: Երրորդը զուտ առևարական հիմունքով է գրիչ վերցնում և այնպիսի գիրք գրում, որի մէջ շոյում, քաջալերում է տհաս դասակարգը առանց այն էլ բորբոքուղ մարմնական հաճոյքները: Այս տեսակը մանաւանդ ամենաշատ տարածուածն է: Չորրորդը իւր մարդկային սխալանքների մէջ յամառելով և խոնարհութեան ոգի ու զըղման քաջութիւն (որ բաջութիւններից ամենահերոսականն է) չունենալով, գրիչ է վերցնում և գիրք գրում ինքն իրեն արդարցնելու և կամ իւր արարքները ծածկելու համար. և կամ հակառակ մարդկային պարտուց և կոչման, մերձաւորին, նոյն իսկ առաւել արժանաւորներին անուանարկում է, որպէս զի ընկածների մէջ ինքը կանգուն երևայ (թէև չարաչար սխալում է) և այլն և այլն:

Այս դասակարգի գրքերի մէջ մաքուր շարժառիթ չկայ: Ուստի և չկայ նպատակի վսեմութիւն: Դրանց պակասում է մտքի առողջ տրամաբանութիւնը, զգացմունքի անկեղծութիւնը, գաղափարների թարմութիւնը, ողևորելու շնորհը: Նրանց զարդարանքը են՝ անվերջ փայլող հակասութիւն, ոճի անտաշութիւն, մտքերի անկապութիւն կամ ցրուածութիւնը:

Այս տեսակ գիրքը ոչ մտաւորին և ոչ մարոյականին է օգուտ, ուստի և խարուսիկ է և սակաւակեաց:

Տպագրութիւնը իւր բազմազան բարիքներով հանդերձ մի մեծ չարիք էլ աշխարհ բերաւ նրանով, որ գրքեր հրատարակելու դիւրութիւնն ամենին ընձեռեց: Եթէ գրքերը՝ դիցուք, միայն ձեռագրով գրուէին և ամեն մի գրքի վրայ հեղինակը իւր կեանքի տասնեակ տարիները մաշէր, այն ժամանակ բուլոր գրքերը կամ գոնէ միծ մասը ընտիր կլինէին, ինչպէս են առհասարակ հին ձեռագրերը նոր տպագրուածների և անվերջ հրատարակութիւնների համեմատութեամբ:

Բայց... ընթերցնող, թողութիւն արա, մի փոքր երկարեցինք բանը և շեղուու ենք մեր նիւթից:

Գրքերի արժանաւորութեան վրայ մեր հայեացքը պարզեցինք: Այժմ կանցնենք մեր «համեստ կարծիքին» գեր. Արիստակէս արքեպիսկոպոսի գրքի վրայ, առաջնորդուելով մեր լուսարանուած հակիրճ տեսութեամբ:

Գեր. Արիստակէս արքեպիսկոպոսի (թող ներէ մեզ ուր-

բազան հայրը, որ մենք իւր կամքի հակառակ արթ-եպիսկոպոս ենք ճանաչում իրեն Հայոց ազգի հետ մէկտեղ և մենք մեր պատճառներն ունինք) գիրքը մի ստուար մեծագիր հատոր է: Առանց ծանօթութիւնների 369 երես, ծանօթութիւններով և վրիպակներով հանդերձ՝ 470 երես: Հրատարակութիւնը շատ սիրուն է: Գինը 1 ռ. 50 կ.:

Գիրքը թէս գլուխներ կամ գրեթէ բաժանմունքներ չունի, բայց ըստ բովանդակութեան՝ կարելի է երեք մասի բաժանել: Ա. Պատկերայարգութեան և պատկերամարտութեան խընդիրը Բիւզանդական և Հոռմէական եկեղեցիների մէջ՝ 1—52 երես: Բ. Պատկերայարգութեան պատմութիւնը Հայոց եկեղեցում թեր և դէմ կարծիքներով հանդերձ՝ որ սակաւ մասն է ըստում) և Գ. Քննութիւն հին և լատին կրօնաւորների գործած խարդաւանափների Հայոց եկեղեցու դէմ խօսքի, ծէսերի, գըրուածքների և պատկերների միջցով:

Նիւթի ընտրութիւնից, դասաւորութիւնից ու նրանց համեմատական քանակից պարզ երեսում է, որ գրքի վերնագիրը կամ անունը չի համապատասխանում բովանդակութեանը: Սակայն այս աշքի ընկնող թերութիւնը թերեւս ծածկուած մնար, եթէ այդ մասերն իրար հետ տրամաբանական մի սերտ կապ ունենային: Մինչդեռ չկան այսեղ նախադրեալներ և նրանցից բղիսող եղբակացութիւններ, այլ կան մտքեր, որոնք սկսւում են բայց դեռ չկերջացած ընդհատուում են մի ուրիշ երկրորդական մտքով, սա էլ ընդհատուում է մի երրորդով և այսպէս անվերջ: Այս թերութիւնը գրուածքի ոճին տալիս է մի ճապաղութիւն, մի յոգնեցուցիչ յատկութիւն: Ծնթերցողն ինչպէս մի խիտ անտառի մէջ՝ ուր ենելու ուղի չկայ, մոլորում է և այդ տարտամ գրութեան մէջ զղջում իւր ձեռնարկութեան վրայ: Մըրազան հեղինակի գիրքը նման է մի գգրոցի, որի մէջ ամենայն ձեի ու գոյնի թղթի կտորներ խառն ի խուռն սեղմուած են:

Տբամաբանական թուլութիւնը և ոճի անհարթութիւնը, մեր կարծիքով, անմիջական հետևանք են այն բանին, որ սրբ հեղինակը առատօրէն նիւթեր քաղելով բազմաթիւ աղբիւրներից, անկարող է գտնուել այդ քաղուածները ներդաշնակ զոյնով ու սեղմ ձեռվ դասաւորել և մի սիրուն շէնք, կառուցումն ստեղծել: Հեղինակն ամենայն ջանախրութեամբ աղիւա, քար, փայտ, տախտակ, աւազ, կիր, ցեխ (այս էլ Կոպրոնիմոսի մականուան բացատրութեան արտայայտիչը) ժողովել է, բայց ի-

բար վրայ կուտակել է ու թողել։ Մի ճարտարապետական տուն կառուցանել չի կարողացել։

Այս պակասութիւնն էլ երկու պատճառից կարող է առաջ գալ ընդհանրապէս։ ընական անընդունակութիւնից (դէպի այսպիսի մի գործ և ոչ թէ ընդհանրապէս) և տրամաբանօրէն մըտածելու վարժութեան պակասութիւնից։ Եթէ ասենք՝ գրքի այդ թերութիւնը առաջին պատճառի ծնունդ է, գուցէ մեղանչած լինինք։ Եթէ ասենք՝ երկրորդ պատճառից բղխած հետեւանք է, գուցէ հրօկհառուզի բառարանի Ճ տառի բառերը կարդացած ընթերցողները նախատեն մեզ, որովհետև այստեղ կարդացած կլինին, որ «Աստուածաբան Արիստակէս եպիսկոպոս Մեդրակեանը ճեմարանական լիակատար ուսմամբ ճոխացած մէկն է» (զարմացական նշանների իրաւունքը խմբագրութեանն է վերապահուած)։ Ուստի հրաժարւում ենք այս ինդիրը լուծելուց և վերստին շեշտում ենք, որ սրբազանի գրքի մէջ տրամաբանական կապը թոյլ է (եթէ կայ միայն), մտքերը ցաք ու ցրիւ, ոճն անհարթ ու տաժանելի։

Սակայն գրքի այս թերութեան կամ առաւելութեանց բուն աղբիւրը կպարզուի յետոյ, երբ մենք ջանանք լուծել գրքի հրատարակութեան (աւելի ուղիղ ասենք՝ գրութեան) շարժառիթը։

Արդեօք եկեղեցու պատմական անցեալի վրայից մի մթին ամպ հեռացնելու միտունմն է շարժել սրբազան հեղինակի միտքը, որով նա կամեցել է գիտական մատենագրութեան շարքում մի փայլուն հատոր և աւելացնել։

Ճշմարիտ գիտական ոգով տոգորուած մարդկանց միտքը ժամանակակից կարիքով է շարժուած ընդհանրապէս։ Այդ կարիքներին ընդառաջ են ելնում մտքի մշակները այն անյողոգողդ հաւատով, թէ իրենց գրիչը ծնունդ առած կարիքին բաւականութիւն կտայ։

Ընթերցող, ասա, ինչ կարիք էիր զգում դու պատկերայագութեան և պատկերամարտութեան (առանց էսէլ ամենայն սիրով և երկիւղաձութեամբ յարգում ես քո եկեղեցում դրուած օծեալ պատկերները), որ ստիպէիր սրբազան հեղինակին 24 (բասն և չորս) երկար ու ձիգ տարիներ (տես գրքի յառաջաբանը) միտք մաշէր և «Պատկերայարդութիւն» գրէր։ Երկրորդ՝ պատմական գիտութեան մէջ ի՞նչ մի նոր մթին աշխարհ է բաց անում այդ գիրքը մեր առջև։ Եւ ոչ մի։

Ուրեմն այս գրքի շարժառիթը մտքի մէջ չէ։ Գուցէ սրտի մէջն է։ Փորձենք տեսնել։

Մեր ընտիր նախնի եկեղեցականները հաւատով զօրեղ են ՀՈՒՄԱՑ

եղել առ Աստուած, սիրով զեղուն առ իւրեանց ազգն ու եկեղեցին, Եւ երբ իրենց պաշտած եկեղեցուն, իրենց սիրած ազգին մի վտանգ կամ կարիք է սպառնացել, նրանց սիրտն զգացուել, անձնուիրական զգացմունքը շարժուել է նրանց հոգու մէջ և նրանք ինքնամոռացութեամբ յառաջ Են նետուել պաշտպանելու ազգն ու եկեղեցին իրենց ուխտի համաձայն, Երբ անձնական օրինակը քիչ է եղել, նրանք սուրբ հոգով շարժուած գրիչ Են վերցրել ու գիրը գրել Նրանք առատօրէն հեղել Են իրենց մաքուր զգացմունքները թղթի վրայ և նրանց գրածը պաղ սրտերը ջեռուցել է, մոլորեալներին դարձի բերել թշնամուն սարսափեցրել. Այդչափ հզօր և համոզիչ է անկեղծ անարատ զգացմունքը, որով սրտի ճշմարտութիւնն է յայտնւում: Իսկ անկեղծ անարատ ճշմարտութիւնը անձի և խօսքի կամ հեղինակի և գրքի ներդաշնակութիւն է պահանջում:

Այդ տեսակ հեղինակների և գրքերի օրինակներ մենք այստեղ շարելու չենք, փնտողը նրանց անունները նոյնիսկ «Փատկերայարգութեան» մէջ կդասի:

Արդեօք սրբազնը իւր մայրենի եկեղեցուն սրտազին մի ծառայութիւն մատուցանելու ազնիւ զգացմունքով է շարժուել այս գիրքը գրելիս Եւ կարմր է այդ երկը եկեղեցու հաւատով ու ազգի սիրով խորապէս յուզել ընթերցողի սիրտը:

Զենք կարծում, որովհետև չենք հաւատում:

Խնչու չենք հաւատում, բացատրենք:

Եկեղեցին մի ազգի, մի ժողովրդի բարոյական ուխտի և ոզեռութեան նշան է, նա պահպանում է և յառաջադիմում իւր նուիրապետութեամբ: Վերջինս իւր Գլուխը կամ Առաքելական փոխանորդն ունի, որին անպայման հնազանդ լինելու և յարգելու ուխտ Են անում նուիրապետութեան անդամները: Քանի ամուր է բարոյական անձնուիրութեան կապը եկեղեցականի և հովուապետի մէջ, այնքան էլ հզօր է Եւ եկեղեցին Եւ ազգը: Հայրապետին ընդվզելը մեր նախնեաց զայրոյթն էր շարժում: Հայրապետական գիրքը տիրապրուժների և օտար թշնամիների դէմն էր հանում յաւիտենական յիշատակաց արժանի մեր հովիներին, բուռն անձնուիրութեամբ, խօսքով և գրչով զինուած:

Որ գեր. Արիստակէս արքեպիսկոպոս այդ վսեմ շարժառիթով չէ վերցրել գրիչը, երևու է հետևեալ տխուր ցանկից:

Ա. «Փատկերայարգութիւն» գիրքը եկեղեցական գիրք է և մեր դաւանութեան հետ կապ ունի: Իսկ Հայոց եկեղեցու

անաղարտ դաւանութեան պահապան հրեշտակն ու տէրը Հայոց սրբակնագոյն Հայրապետն է։ Առանց նրա թոյլտութեան և ոլորմած հաճութեան ոչ մի եկեղեցական գիրք չի կարող տը-պագրուել։ Սակայն սրբազն հեղինակը իւր թէ այս և թէ նախորդ գրքերը իւր Հոգեոր տիրոջ հաճութեանը ներկայաց-նելու ցանկութիւն չէ ունեցել։ Ընթերցնել, սիրադ կարժե է ջերմանալ հաւատով և սիրով դէպի քո մայր եկեղեցին, երբ այս գրքի վրայ հայրապետական գրոշմը չկայ։

Բ. Գրքի հեղինակին Հայոց ազգը արքեպիսկոպոս է ճա-նաչում, որովհետև Սրբազնակատար Հովուապետը իւր յատուկ բարութեամբ 1894 թ. նրան արքութեան սիտղոսն է շնորհել։ Բայց հայրապետներին նազանդութեան երդումն արած Սրբա-զան եպիսկոպոսը 8—9 տարի շարունակ արհամարհել է հայ-րապետական համբուրելի շնորհը, արդ պատուանունը իւր վը-քայ առնել չէ ուղում։ Այս վարմունքը ծանր արհամարհանք է ոչ միայն դէպի ազգընտիր հայրապետը, այլ և դէպի նրա անսահման բարութիւնը։ Ամենայն կիրք կհնանայ, բայց գրաբութիւնը միակ հազուատն է, որ չի հնանալ» (փե-լիսոփայ Թօրօ։ Կարելի՞ է միթէ բարութիւնն արհամար-հել ի դէպ. ասում են որ Արիստակէս սրբազնը խելօք մարդ է։ Եթէ յիրաւի այդպէս է, մենք մի հեղինակի խօսքն ենք յիշեցնում նրան։ «ամենայն լաւ մարդ չի կարող խելօք լի-նել, բայց ամենայն խելօք (խելքով) մարդ կարող է՝ եթէ կա-մենայ, իւր առաքինութիւնը իւր խելքի բարձրութեանը հաւա-սարել» (Վալտէր Սկօտտ), Սրբազն Արիստակէսի սիրուց թա-փուր վարմունքները արձագանք գտան և երկու-երեք նման եկեղեցական անձանց մէջ, որոնք հայրապետական կոնդակնե-րը, որ Հայոց ազգի համար սրբութիւն են, անգործադիր թո-ղին և նոյն իսկ առ տէր յղելու համարձակութիւնն ունեցան։ Այս օրինակները նոյն իսկ գայթակղեցուցիչ ազդեցութիւն գործեցին երիտասարդ եկեղեցականներից ոմանց վրայ։ Իւր գրած գրքից շատ աւելի բարերար ազդեցութիւն կունենար սրբ. Արիստակէսի մաքուր զղջումն Հայրապետի առաջ. «Զըղ-ջումն էլ սարսափելի չէ, ինչպէս և ճշմարտութիւնը. նա էլ ճշմարտութեան նման ուրախացուցիչ է և պտղաքեր» (Տօլստոյ)։ Ինչպէսի ոգևորութեամբ և ծնկաչոք կհամբուրէինք Արիստակէս սրբազնի աջը, եթէ նա Հայոց Հայրապետից ներումն հայցէր և արքութեան շնորհն իւր վրայ առնելով «Արիստակէս արքե-պիսկոպոս» ստորագրէր։

Բայց մենք սրտի յուզմունքով շեղուեցանք մի փոքր։

Գ. Հեղինակի անձնաւորութեան և գրուածքի մէջ մենք հաւ-
կասութիւններ ենք տեսնում: Սրբազն հեղինակը կարծես մէ-
վայրկեան մոռանում է իւր անձնաւորութիւնն և հայ եկեղեցակա-
նի մաքուր նախանձախնդրութեամբ մերկացնում է ներսէս Գ-ին-
որ յունական գաղտնի յանձնարարութեամբ Զուարթնոց եկեղե-
ցին է շինում, Ս. Եջմիածնի փառքը նսեմացնելու համար: Ար-
դար զարոյթով մտրակում է յոյն և լատին հաւատորուներին,
որոնք նենգութեամբ մտան ու մտնում են մեր սուրբ փարախը,
մեր եկեղեցու ծոցից հանում ժողովրդին, մեր նուիրապետու-
թեան մէջ պառակտում ձգում, մամոնայի գնով ուխտեր քանդում
և այլն և այլն: Ապա Ռւոհայեցու սրտաճմլիկ նկարագիրն է ա-
ռաջ բերում (214 երեսից) թէ ինչպէս Հայոց հայրապետական
աթոռը անձնական ու աշխարհական հաշիւներով չորս հակա-
թոռ հայրապետութեան էր բաժանուել եւն: Ամենից յետոց
(296 երես) կարդում ենք. «ցաւօք սրտի պիտի պատասխանենք»
թէ շատ են օրինակները, որոնք ապացուցանում են թէ ինչ-
որ անկարելի է մի եկեղեցու համար, ուր յարգուած է և պահ-
պանում է անպայման հետևողականութիւն, մեզանում կարելի
է եղել միմիայն նրա համար, որ եկեղեցու պաշտօնեաներից
եւ ղեկավարներից ումանք շատ աղօտ եւ սահմանափակ հաս-
կացողովդիւն են ունեցել (եւ ունին) իրենց պարտքի եւ ի-
րատների մասին: այնքան սահմանափակ, որ ոչնչով չէ
զանազանուել (եւ զանազանում) կամայականութեան եւ
քմահաճոյքի հասկացողովդիւնից»: (Ընդգծումն և փակագծե-
րը մերն են):

Այս տեսակ կտորները կարդալիս մեզ թւում էր թէ Օձ-
նեցիների, Որունեցիների, Տաթևացիների անոյշ ձայնն է գա-
լիս մեր ականջին և որքան անգամ ցանկացանք, որ այս գըր-
քում գրուէին աղքիւրների ուսումնասիրութեամբ միայն ներ-
քին ու արտաքին թշնամեաց անարդ ունձգութիւնները
Հայոց հայրապետութեան և եկեղեցու դէմ, որովհետև այդպիսի
զգուշութեան միշտ կարօտ և թրթուն սրտով է սպասում մեր
ազգը իւր հովիւներից: Իսկ մնացած խառնիճաղանճը դուրս ձը-
գուէր. և մէկ էլ հեղինակի գործի և գրուածքի մէջ հակասու-
թիւն չլինէր: Բայց... ծածկենք այս բայցը:

Դ. Սիրտ գայթակեցնելը կամ անզգոյշ կերպով մի ան-
հատի, մի ժողովրդի նուիրական զզացմունքին դիպչելն ի հսուց
անտի և այսօր ծանր յանցանք է համարուու: Իւրաքանչիւր
մարդ կամ ազգ իւր սրտով, իւր զզացմունքներով, է [ապրում]
կուարեցէք զուք նրա սիրտը՝ այդ խնկամանը, ուր նրա երջան-

Հոռովածինն է մխում ու անուշ բուրմունքով լցնում նրա ամբողջ էկութիւնը և դուք ամենաթշուառ ապերջանիկ արարածը կդարձ-նէք նրան և կամ ստիպէք, որ նա փչանայ, վատասիրտ դառ-նայ: Այսպէս վտանգաւոր բան է սրտի ճշմարտութիւններին դիմուլել: Խոկ երբ ժամանակ և անպայման օդտակար է համա-քուել մի ժողովրդի սրտի ճշմարտութիւններից մէկի արձանը խորտակել, այդ արել են սուրբերն ու մեծերը զգուշութեամբ, հեռատեսութեամբ, նախապէս խորտակուելիքի տեղը նոր և ա-ւելի գեղեցիկ և ընդունելի արձան պատրաստած ունենալով, որ հնի տեղը դնեն:

Մեր «Պատկերայարգութեան» հեղինակն այդպէս չի վար-ւում: Մի սահմանափակ նպատակ զնելով իւր առջև՝ այն է յայն և լատին կեղերի կեղծիքները մերկացնել, անշրջահայեաց կերպով հերքում և կեղծ է համարում Հայոց եկեղեցու համար դարաւոր սրբութիւն դառնած շատ պատկերներ, խաչեր, յիշատակներ (օր. Հոփսիմեանց ս. խաչ, Տիրամօր պատկերը, Փրկչի պատկերը և այլն):

Ուր կտանէր մեզ այդ անողոք ըննադատութիւնը, եթէ մենք այդ ոճով խծրծէինք մեր բոլոր սրբութիւնները: Մտքի ճշմարտութիւններին սուր նշտարով կարելի է դիմուլ: Բայց սրտինինը՝ ոչ երբէք: Դա յանցանք է: Ամբո մենք որ խաչ, պատկեր, Աւետարան ենք յարգում, այդ միայն նրա համար է, որ մենք նրանց հեղինակներին, սրբացած տէրերին ենք պաշ-տում: Բաժանեցէք այդ նուիրական առարկաները իրենց սըր-բաղան տէրերից կամ հեղինակներից և վերագրեցէք դիցուք որևէ է Թորոսի, Արիստակէսի, Կարապետի, Փանոսի, մենք դէն կշպրտենք նրանց դատարկ, անմիշիթար սրտով:

Մենք մի անգամ հետևեալ իրականութեանը հանդիսատես ենք եղել: Հրապարակում ծովացած ժողովուրդը «Հայրէկ», հայ-րէկ» է կանչում և կամենում է որ Հայրիկը դուրս գայ տան պատշգամբը, մի երկու խօսք ասէ և միիթարէ ժողովրդին: Դուրս է գալիս Հայոց Հոգնոր Տէրը և այս անգամ փոխանակ իրեն յատուկ իմաստալից մաքերից մի քանիսն ասելու, ապու-ըի պատմութիւն է անում. է՞հ, տղաքս, այսօր յոդնած եմ, քիչ մալ անօթցեր եմ: Դուք այսօր խաց կերե՞ր էք». «Այն, Հայրիկ», բղաւում է ժողովուրդը: Ես չեմ կերեր. իմ ապու-ըի կպաղի. ապուր աղէկ կերակուր է: Դուք էլ ապուր կերեք: Դէ՞հ, Աստուած օրհնէ ձեզ որդիք, դուք գնացէք հանգստացէք, ես ալ երթամ զիմ ապուրն ուտեմ»:

Եթէ այս խօսքերը Հայ ժողովրդին վերոյիշեալ անուննե-

րով անձինք կամ սովորական ուրիշ մահկանացուք ասէին, ժողովուրդը երես դարձրած յես կփախչէր, էլ չէր երեայ. Բայց թնջ տեսանք մենք բազմութեան միջից շատերը լաց եղան մըր-միջալով. «ախ, Հայրիկ ջան, ապուր կուտէ», մնացեալի ոգևորութեան չափ չկար. Խնչմա. որովհետև այդ խօսքերը Հայրիկինն էին:

Եզրակացութիւն. Գեր. Տէր Արիստակէս արքեպիսկո-պոսը իւր գերքը գրելիս սրտի և մտքի վսեմ, մաքուր զօրու-թեամբ չի շարժուել, ուրիշ խօսքով, սուրբ հոգով չի շարժուել, այլ ուրիշ շարժառիթով: Մեր կարծեաց մի ապացոյցն էլ այն է, որ այդ գրքի (ուղիղն է այդպիսի գրքի) յղութեան օրից մինչև ծնունդը քանուշորս տարի է քաշել: Ս. Հոգով յղա-ցուած մտքերը արագապէս հոսում են աղբիւրի նման և այդպիսի մի գերք արտադրելու համար 24 տարի պահանջելու պէտք չունին:

Ապա թնջ շարժառիթով է գրել սրբազն հեղինակն իւր այս երկը. Այս րոպէիս մեր կարծիքը կյայտնենք և այդ խնդրի մասին:

Մեր եկեղեցականներից ոմանք թէն քաջ գիտեն թէ դարերի ընթացքում լատին կղերն ընդհանրապէս և Վե-նետիկի հայ հեստեալները մասնաւորապէս որպիսի բարո-յական աւեր և պառակտումն են ձգել և ձգում Հայ ազգի և եկեղեցու մէջ, բայց և այնպէս անգիտակցաբար թէ գիտակցաբար զիտնականութեան հիւանդութեամբ բռնութելով սկսան նրանց հետևել, իրենց կոչումից փոքր ինչ շեղուելով:

Ընթերցողը կարծի, թէ մենք ընդհանրապէս գիտութեան կուսակից չենք, Կսիսալուի եթէ այդպէս կարծի: Մենք այս-տեղ բացատրելու բան ունինք:

Վենետիկեցիք անժողովուրդ, անազգ, անհայրենիք մի խումք վանականներ են: Իրենց վանքը, կեանքը պահպանելու համար միջոցներ պէտք է ձեռք առնէին, Բացի այդ, որովհետեւ նրանք էլ ուտում, խմում (երևի Լոււմայի խմբագրութիւնը կաւելացնի՝ դեռ մեզնից շատ աւելի լաւ), եռանդ են հաւա-քում, պէտք էր ըստ բնախօսական օրինաց, որ նրանք մի գործ անէին, եռանդ, ոյժն արտադրէին մի կերպ, որ թէ հոգու և թէ մարմնի պիտանի լինէր և մարդկային փառախ-րական ձգտմանը բաւականութիւն տար: Նրանք անտարակոյս ամենայարմարը և ըստ էութեան մաքուր աշխատանքն սկսեցին, այն է գիտութեամբ զբաղուիլ, որ նրանցում ծառանգական դարձաւ: Դիտական գրքերով նրանք անուն կշահէին և գրքերը

միայն Հայոց լեզուով գրելով օրհնեալ Հայ ազգից անբաւ հարստութիւն կդիզէին, թէկուղ այդ գրքերի մի մասը Հայ ազգի դէմ գրուած լինէր:

Ուրեմն վենետիկեցոց գրականութեամբ պարապելը իրենց վիճակով և առևտրական շարժառիթով է պայմանաւորուած: Առանց այդ խորունինիրը թափանցելու՝ մենք նրանց գրական վաստակներով և շատ ենք օգտուել (անշուշտ «Էռումայի» խմբագրութիւնը կասի «բայց ոչ այնքան, որքան նրանք օգտուել են էջմիածնի առապանքով ու խնամքով պահպանուած Հայ ազգից»). այդ մասին երախտագէտ ենք:

Մեր հոգեորականներից ումանք կամենալով գիտնական անունով հոչակեալ վենետիկեցիների թափթփած դափնիներից պսակ հիւսել իրենց գլխին, գրիչ վերցըին և սկսան գիտնականութեամբ պարապել: Ով չէր կամենայ, որ մերոնք էլ իրենց ամբողջ կեանքը զիտութեան նուիրէին և հազարաւոր հատորներ գրէին, եթէ որ իրենց կոչումը, անդրանիկ պարտքը մնաս չքաշէր:

Մեր հոգեորականի էական պարտքը, սրբազան կոչումը հովուութիւնն է. մերոնք կոչուած են նախ և առաջ ժողովուրդ հովուելու: Հովուել կարելի է շրջելով ու կենաց բանը քարոզելով յունկն ժողովրդեան. ժողովրդի ինքնուրոյն առաքինութիւնները քաջալերող պատմուածքներ գրելով ու տարածելով, ժողովրդի թերութեանց, մեր կեանքի մէջ մտած մնասակար օտարամութեան և օտարամուծութեանց դէմ գրքեր. գրելով ու տարածելով. ժողովրդի բանահիւսութեան հատուկտորը հաւաքելով ու տարածելով և այլն և այլն: Մինչդեռ մեր ժողովուրդը վիպական սիրուն լեզուով Հայոց պատմութիւն չունի որ կարդայ ու ինքն իրեն ճանաչի, մեր նահատակ եկեղեցու պատմութիւնը չունի որ կարդայ և յուղուի, մեր հաւատի դաւանանքը չունի որ կարդայ և հաւատայ ու յուսայ, Աւետարան չունի և Աւետարան լուսաբանող քարոզագրքեր չունի. մեր կանայք օտար ազդեցութեամբ այլասեռուամ են, երիտասարդները մոլորում, մի ջիգեարով գրուած առաջնորդող գիրք չունին. յարգանքը դէպի ծնողն ու ծերութիւնը, սէրը դէպի որդին ու փոքրը մերնուամ են, քայլայւում է հայ ընտանիքը, աղաւաղւում է հայ մարդու ինքնուրոյն պատկերը, սոռացւում է մայրենի լեզուն, նսեմանում է եկեղեցու փառքը—մեր եկեղեցականները Դրէպի են թարգմանուամ, Պողիկեանների հէքիաթներ գրում, Դաւիթ անյաղթի մտքերն են վերլուծում և այլն: Արդեօք այդ գրքերը կփրկէն հայ ազգը (և միթէ դրանք հայ ազգի համար

են գրաւմ, հւր է կարդացողը) և եթէ հայն անցնի, կմսմն այդ գրքերը:

Մեզ համար «Դրախտի ընտանիքներ» գրեցէք, սուրբ հայրեր, մեր աշխարհի վրայ բոսորագոյն նստած «Մանանայ» ժողովեցէք, մեր ծաղիկներից «Համով-Հոտով» փնջեր կապեցէք, մեզ համար «Հրաւիրակ երկրին Արարատեան», «Հայոցի», գրեցէք, «Մարգարիտ արքայութեան երկնից» կարդացէք, մեր աղդի պատմութեան մատչելի անուշաբան գիրք տուէք, մեր դաւանանքն ուսուցէք, մեր աշուղներին քաջալերեցէք, մեր փառքերը պատմեցէք, մեր աւերակները ողբացէք, մեր յօյսերը վառեցէք...

Ահա թէ ինչ պիտի լինի մեր արդի գրականութեան նիւթը և ինչ պարագ կալ հայ եկեղեցականի վրայ:

Բայց չէ, մերոնք ուզում են եւրոպական համարուիլ, Ողորմելիք, ձեր փառքն ու կճնդանութիւնը միայն Հայոց ազգի մէջն է. դարձէք այդ մոլորութիւնից:

Ամփոփենք. Արիստակէս սրբազնին գրիչ վերցնելու և «Պատկերյարդութիւն» գրելու շարժել է գիտնականութեան ծարաւը: Բայց պնդապէս հաւատացնում ենք սրբազնին, որ իւր իսկ փոքրիկ մի ժողովածուն «Քնար մշեցոց և վանեցոցը», նոյն իսկ նրա մի հատիկ «Քարոզ խաչը, շատ աւելի երկար կեանք ունի և փառք բերող է ժողովողին, քան «Պատկերյարդութեան հաստ երկնատորը», որ օր պակաս հրեխայի նման շուտով պիտի մեռնի:

Մենք վերջացրինք, սիրելի խմբագիր, Ուզում էի անունս դնել յօդուածիս տակ, բայց չար լեզուներն ասում են, որ Արիստակէս սրբազնը Աղամայ մթանը շատ փիս մտրակ է քաշում մարդու թիկունքին: Խոստովանանք լինի, վախեցայ և վճնեցի ծածկանուն գնել: Պառկեցի անկողնիս վրայ և ծածկանուն էի որոնում: Թունս տարել էր: Երազում տեսայ յաւերժայիշատակ պ. Աբգարին: Նա իւր քաղցր ժպիտով առաջս եկաւ ու հարցրեց, թէ ինչ եմ այդքան մտածում: Ասացի ծածկանուն եմ որոնում յօդուածիս համար ու չեմ գտնում: Նա կարդաց գրածս և «մախլնս» աղաղակեց ու բարձր ձայնով ծիծաղեց:

—Դրա համար ես միտք անում:

—Այս, պ. Աբգար:

—Ուզում ես ես քեզ մի անուն տամ:

—Մեծ պատիւ կանէք:

Նա ոտքի կանգնեց, ձեռքին բաժակի ձև տալով շուռ
տուաւ գլխիս և ասաց. մկրտի ծառայս Աստուծոյ ի նոր գրա-
կան անուն «Մախլաս»:

—Պ. Արգար, այդ ի՞նչ անուն է:

—Այդ իս հին ահունն է. թէև ինձ պէտք չէ և մի բէջ
հնացած, բայց ընդունիր:

Արգարի հինը շատ նորերից նոր է ու կմնայ և ես ուրախ
ուրախ վեր թուայ տեղիցս ու գրիչս թախախելով՝ ստորագրեցի

ՄԱԽԼԱՍ

Աղաղարօապար եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են
զից ու էջմ. միարան Բարդուղիմէոս եղ. Գէորգեան:

Այս փոքրիկ գրքոյկը, որ սրբազն եպիսկոպոսը հրատա-
րակել է ուստերէն թարգմանութեամբ հանդերձ, բացի մասնա-
գիտական հետաքրքրութիւն ունենալուց՝ արժանի է ուշադրու-
թեան և այն զօրեղ բողոքի շնորհիւ, որ հեղինակը բարձրաց-
րել է «Մշակ» լրագրի և Խաչիկ վարդապետ Դատեանի թեթևա-
միտ և անմիտ վերաբերմունքի դէմ դէպի էջմիածինը: Խնդիրը
նրանումն է, որ մի քանի տարի առաջ էջմիածինի մօտ պեղում-
ներ կատարուեցին և գետնի տակից գուրս եկան ահազին շի-
նութիւնների հիմքեր և քարէ սիւներ ու զանազն առարկա-
ներ. Գեր. Բարդ. եպիսկոպոսը կարծիք յայտնեց, թէ այդ հնու-
թիւնները հին հայոց կուսական մի մեհեանի տեղ յետա-
գայում շինուած Զուարթնոց եկեղեցու հետքեր են: Խաչիկ վար-
դապետը, որ ի հարկէ ոչ մի ձեռնհասութիւն չունի դատելու
այս խնդրի մասին, լուրեր էր տարածում, որ գանուած շինու-
թիւնները հին էջմիածնի տաճարն է: Այսպիսի գայթակղեցու-
ցիչ վարմունքի դէմ է բողոքում հեղինակը: Ցաւալի է իհարկէ
որ էջմիածնի Սիսոդն և պատշաճաւոր իշխանութիւնը իւր
ժամանակին դրական միջոցներ չէին ձեռք առել զսպելու այդ-
պիսի ոտնձգութիւնները:

ԸՆԹԵՐՑՈՂ

Իմ պատասխանը պ. Գ. Ենգիբարեանին

«Հումայում» տպուած պ. Գար. Ենգիբարեանի մատենա-
գրական յօդուածը իմ հայերէնից ուստերէն լիակատար բառա-
բանի մասին *) կարդացի մեծ հետաքրքրութեամբ: Պ. Ենգիբա-

*) «Հումայ» 1905 թ. մարտ, եր. 120—125: